



Հաստատում եմ

Տնօրեն

Յու. Սուքիասյան

« 29 » 12 2016 թ.

«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողների բարեվարքության կանոններն ու պարտականությունները

ՀԻՄՆԱԿԱՆ ԷԹԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էթիկական նորմերի կիրառությունն անընդհատ գործընթաց է: «Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ուսանողների համար ապահովում է կրթական միջավայր՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի և վստահության վրա: Քոլեջը պատասխանատու է ուսանողների կրթական և անձնական բարեկեցության ապահովման համար՝ միաժամանակ նրանց պարտավորեցնելով ցուցաբերել համապատասխան կրթական և անձնական վարքագիծ: Համապատասխան ուսումնական և անձնական վարքագիծն ընդգրկում է, բայց չի սահմանափակում հետևյալ պարտականություններով:

Ուսանողի հիմնական նպատակը պետք է լինի ուսումը:

- Ուսանողը պետք է հոգ տանի իր մասնագիտական գիտելիքի և հմտությունների ու զարգացման համար, որպեսզի հասնի մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքին:
- Ուսանողը չպետք է ստի ուսման ու քննության ընթացքում:
- Ուսանողը երբեք չպետք է յուրացնի ուրիշների աշխատանքը և պետք է հարգի ուրիշների մտավոր ունակությունը:
- Ուրիշի աշխատանքը օգտագործելիս ուսանողը պարտավոր է համապատասխան հղում կատարել և լինել ազնիվ:
- Ուսանողը երբեք չպետք է խաչնդոտի ուսման և քննության ընթացքին իր անհամապատասխան վարքով:
- Ուսանողը պետք է աչալուրջ կերպով հետամուտ լինի ուսման գործընթացին՝ ակտիվ պատասխանատվությամբ մասնակցելով ուսման գործընթացին:
- Ուսանողը պետք է հարգի ուրիշների արժանապատվությունը, անձնական կյանքը և առհասարակ կյանքը ուսուցման կամ հետազոտությունների ընթացքում:
- Ուսանողը պետք է լավագույն կերպով նպաստի խմբային աշխատանքների և գործնական պարապմունքների նպատակների իրագործումը:
- Ուսանողը պետք է ենթարկվի քոլեջի կողմից սահմանված բոլոր այն կանոններին և կանոնակարգերին, որոնք կապված են ուսուցման ընթացքի հետ: Յուրաքանչյուր ուսանող անձամբ տեղեկացվում է բարոյական կանոնների և պարտականությունների մասին: